

ԹՈՒՉՔԱՅԻՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տեղեկացնում ենք, որ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) թոհչքային անձնակազմերի սերտիֆիկացման հարցերով փորձագետ ներգրավվելու նպատակով դիմել է մեկ քաղաքացի՝ Աիդա Հովհաննեսի Գաբրիելյանը:

Հայտնում ենք, որ Աիդա Հովհաննեսի Գաբրիելյանը բավարարում է որպես Կոմիտեի թոհչքային անձնակազմերի սերտիֆիկացման հարցերով փորձագետ ներգրավվելու Հայաստանի Հանրապետության կառավարության 02.08.2018թ. թիվ 878-Ն որոշմամբ սահմանված պահանջներին, ինչպես նաև Կոմիտեի նախագահի 20.07.2023թ. թիվ 333-Ա հրամանով հաստատված Կոմիտեի թոհչքային անձնակազմերի սերտիֆիկացման հարցերով փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների ծրագրի պահանջներին, և նրա հետ 01.08.2023թ.-ին կնքվել է թիվ 3 պայմանագիրը՝ 01.08.2023թ.-ից մինչև 01.08.2024թ. ժամկետով՝ ներգրավելով որպես թոհչքային անձնակազմերի սերտիֆիկացման հարցերով փորձագետ: